

ՓՈԽԸՄԲՈՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության կառավարության

և

Եգիպտոսի Արաբական Հանրապետության կառավարության

միջև

գիտության և տեխնոլոգիաների ոլորտներում

համագործակցության մասին

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Եգիպտոսի Արաբական Հանրապետության կառավարությունը, այսուհետ՝ «Կողմեր»,

գիտակցելով գիտության և տեխնոլոգիաների կարևորությունն ազգային տնտեսությունների զարգացման գործում,

ցանկանալով ամրապնդել և զարգացնել գիտության և տեխնոլոգիաների ոլորտներում համագործակցությունը՝ հիմնված հավասարության և փոխշահավետության սկզբունքի վրա,

հիմք ընդունելով 1992 թվականի մայիսի 27-ին Կահիրեում ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Եգիպտոսի Արաբական Հանրապետության կառավարության միջև տնտեսական և գիտատեխնիկական համագործակցության մասին» համաձայնագիրը և 1997 թվականի մարտի 17-ին Կահիրեում ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Եգիպտոսի Արաբական Հանրապետության կառավարության միջև մշակույթի, կրթության և գիտության բնագավառներում համագործակցության մասին» համաձայնագիրը,

համաձայնեցին հետևյալի շուրջ.

Հոդված 1

Կողմերը կհամագործակցեն գիտության և տեխնոլոգիաների ոլորտներում՝ Փոխըմբռնման հուշագրի (այսուհետ՝ Հուշագիր) դրույթներին և իրենց պետությունների ազգային օրենսդրություններին համապատասխան:

Հոդված 2

Համագործակցությունը կներառի հետևյալ ձևերը՝

- ա) համատեղ հետազոտական նախագծերի իրականացում,
- բ) գիտնականների, հետազոտողների և տեխնիկական փորձագետների փոխանակում,
- գ) գիտական հանդիպումների, գիտաժողովների, սիմպոզիումների, դասընթացների, աշխատանքային հանդիպումների, ցուցահանդեսների և այլ միջոցառումների կազմակերպում և մասնակցություն,
- դ) փոխադարձաբար համաձայնեցված համագործակցության այլ ձևեր:

Հոդված 3

Սույն Հուլիսի իրականացման նպատակով Կողմերը կստեղծեն Համատեղ աշխատանքային խումբ՝ կազմված Կողմերի հավասար թվով նշանակված ներկայացուցիչներից, ովքեր անհրաժեշտության դեպքում կհանդիպեն Հայաստանի Հանրապետությունում կամ Եգիպտոսի Արաբական Հանրապետությունում:

Յուրաքանչյուր Կողմ ինքն է կրում Համատեղ աշխատանքային խմբի հանդիպումներին մասնակցության հետ կապված ծախսերը:

Համատեղ աշխատանքային խումբը՝

- ա) ստեղծում է բարենպաստ պայմաններ սույն Հուլիսի իրականացման համար,
- բ) մշակում է մեխանիզմներ համատեղ նախագծերի իրականացման համար,
- գ) իրականացնում է գիտության և տեխնոլոգիաների ոլորտներում երկկողմ համագործակցության փորձի փոխանակում և վերանայում է առաջարկությունները համագործակցության հետագա զարգացումն ապահովելու համար,
- դ) մշակում է պարբերական գործառնական ծրագրեր:

Համատեղ աշխատանքային խումբը գնահատում է նախկին և ներկա համատեղ գործունեությունը, ինչպես նաև պլանավորում է հետագա քայլերը:

Համատեղ աշխատանքային խումբը մշակում է իր գործունեության ընթացակարգի կանոնները:

Հոդված 4

Սույն Փոխըմբռնման հուշագրի Հոդված 3-ի 2-րդ կետի «դ» ենթակետում նշված գործառնական ծրագրերը մշակվում են հայաստանյան և եգիպտական գիտական և կրթական պետական հաստատությունների կողմից ներկայացված նախագծային առաջարկությունների հիման վրա և քննարկվում են Համատեղ աշխատանքային խմբի հանդիպումների ընթացքում:

Գործառնական ծրագրերը ներառում են.

- ա) համատեղ գիտական և տեխնոլոգիական հետազոտական նախագծեր՝ համաձայնեցված հայաստանյան և եգիպտական հաստատությունների կողմից,
- բ) համատեղ գիտական և տեխնոլոգիական հետազոտական նախագծերի իրականացման համար պատասխանատու հաստատություններ՝ գերատեսչական մարմիններ, գիտական կառույցներ, հետազոտությունների և մշակումների ոլորտների կազմակերպություններ, գիտական միություններ և այլ փոխհամաձայնեցված հաստատություններ,
- գ) համատեղ գիտական և տեխնոլոգիական նախագծերի արդյունքների օգտագործման մեթոդներ,
- դ) ֆինանսական ռեսուրսներ և համատեղ գիտական և տեխնոլոգիական հետազոտական նախագծերի ֆինանսավորման պայմաններ:

Հոդված 5

Համատեղ նախագծերի ֆինանսավորման ժամկետներն ու պայմանները սահմանվում են Կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

Հոդված 6

Գիտական հետազոտությունների և մշակումների նախագծերի արդյունքները, ինչպես նաև սույն Հուշագրի ներքո համագործակցության գործունեության արդյունքում ստացված այլ տեղեկատվություն հրապարակվում է Կողմերի փոխադարձ համաձայնությամբ և Կողմերի պետությունների ազգային օրենսդրություններին և միջազգային պարտավորություններին համապատասխան:

Կողմերը, իրենց պետությունների ազգային օրենսդրություններին և միջազգային պարտավորություններին համապատասխան, ապահովում են սույն Հուշագրի շրջանակում իրականացվող համագործակցության արդյունքում ստեղծված մտավոր սեփականության իրավունքների պաշտպանությունը:

Հոդված 7

Երրորդ երկրների կամ միջազգային կազմակերպությունների գիտնականները, հետազոտողները, տեխնիկական փորձագետները և հաստատությունները Կողմերի փոխադարձ համաձայնությամբ կարող են հրավիրվել մասնակցելու սույն Հուշագրի ներքո իրականացվող նախագծերին:

Այսպիսի մասնակցության ծախսերը կրում է երրորդ երկիրը կամ միջազգային կազմակերպությունը, եթե Կողմերը այլ կերպ չեն համաձայնում:

Հոդված 8

Սույն Հուշագրի իրականացման համար Հայաստանի Հանրապետության կառավարությունը պատասխանատու է նշանակում Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեին, իսկ Եգիպտոսի Արաբական Հանրապետության կառավարությունը՝ Բարձրագույն կրթության և գիտական հետազոտությունների նախարարությանը:

Հոդված 9

Սույն Հուշագրի մեկնաբանման կամ կիրարկման հետ կապված ցանկացած վեճ լուծվում է դիվանագիտական ուղիներով՝ երկկողմ բանակցությունների և խորհրդակցությունների միջոցով առանց ազգային, միջազգային դատարանների կամ երրորդ կողմի միջնորդության:

Հոդված 10

Սույն Հուշագրում ցանկացած փոփոխություն կատարվում է փոխադարձ համաձայնությամբ և ձևակերպվում է սույն Հուշագրի անբաժանելի մասը կազմող առանձին արձանագրությամբ, որը ուժի մեջ է մտնում սույն Հուշագրի կնքման համար նախատեսված ընթացակարգերին համապատասխան:

Հոդված 11

Սույն Հուշագիրը չի ազդում Կողմերի պետությունների միջազգային պարտավորություններից բխող իրավունքների ու պարտականությունների վրա:

Հոդված 12

Սույն Հուշագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից և գործում է անորոշ ժամկետով, մինչև Կողմերից մեկը դիվանագիտական ուղիներով գրավոր ծանուցմամբ չի հայտնում մյուս Կողմին սույն Հուշագիրը դադարեցնելու իր մտադրության մասին: Դադարեցումն ուժի մեջ է մտնում մյուս Կողմին դիվանագիտական ուղիներով ծանուցելու օրվանից վեց ամիս հետո:

Սույն Հուշագրի դադարեցումը չի ազդում Հուշագրի շրջանակներում իրականացվող նախագծերի վրա:

Կատարված է Երևան քաղաքում, 2023թ. հունվարի 29-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, արաբերեն և անգլերեն, ընդ որում՝ բոլոր տեքստերը հավասարազոր են: Մեկնաբանման ժամանակ ծագած տարաձայնությունների դեպքում նախապատվությունը տրվում է անգլերեն տեքստին:

**Հայաստանի Հանրապետության
կառավարության
կողմից**



**Եգիպտոսի Արաբական
Հանրապետության կառավարության
կողմից**

